Լեռնապար

Բնակչություն՝ 534

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 57 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Հայի Փամբ, Հայկական Փամբ, Հայ Փամբ, Յայլա Ղարաքիլիսա, Ղարաքիլիսա Թուրքի անվանումները: Լեռնապար է վերանվանվել 1978 թ-ին:
Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի հարավահայաց լանջին, կանաչապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 2140 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սուահողային տափաստաններ են: Ունի սառնորակ աղբյուրներ:
1831 թ-ին ունեցել է 323, 1897 թ-ին՝ 577, 1939 թ-ին՝ 1092, 1959 թ-ին՝ 644, 1979 թ-ին՝ 485 բնակիչ: Բնակչության մի մասը եկել է Ախուրյանի շրջանի գյուղերից: Համայնքի բնակչությունը կազմում է 634 մարդ: Սեռային կազմում կանայք եւ տղամարդիկ ունեն նույն համամասնությունը՝ կազմելով 50-ական տոկոս: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 35%, աշխատունակները՝ 49%, հետաշխատունակները՝ 16%:Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղն ունի 127 տնտեսություն:
Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի 65%, որոնց մեջ 804 հա կազմում են արոտավայրերը, 105հա՝ վարելահողերը: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնաբուծությանը: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: